ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Անգլերեն լեզվի գործնական դասընթաց
Մարզաառողջարարական և մարզչամանկավարժական
ֆակուլտետների
III կուրսի համար

ԲԱԿԱԼԱՎՐԻ ՏԻՊԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Երևան – 2010թ.

Հաստատված է լեզուների ամբիոնի
նիստում
արձանագրություն թիվ 8
16.03.2010
Հաստատված է ՖԿՀՊԻ-ի գիտական
խորհրդի նիստում

Բացատրագիր

Օտար լեզվի տիրապետումը կարևոր նշանակությունը է ստանում ժողովուրդների միջև շփումների ընդլայնման պայմաններում, այդ պատճառով էլ այն համարվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագետների ժամանակակից պատրաստման անբաժանելի մասը:

Բուհում լեզվի ուսուցումը իրենից ներկայացնում է ինքնուրույն և ավարտուն դասընթաց, որն ունի իր նպատակը, խնդիրներն ու կառուցվածքը:

Լեզվական և խոսակցական նյութի ծավալը, ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ ամփոփիչ հսկողության դեպքում, բնորոշվում է տվյալ բուհի մասնագիտական առանձնահատկություններով և ուսանողների պատրաստության մակարդակով:

Անգլերեն լեզվի ուսուցման նպատակը ոչ լեզվական բուհում հանդիսանում է ուսանողների շփումը այդ լեզվով: Ուսուցման ընթացքում զարգանում են այնպիսի ունակություններ, որոնք դասընթացի ավարտից հետո ուսանողին տալիս են հնարավորություն կարդալ մասնագիտական գրականություն բնագրից՝ տեղեկատվություն ստանալու համար:

Այս ծրագիրը համալիր է ինչպես իր կառուցվածքով, այնպես էլ լեզվական նյութի բովանդակությամբ:

Ծրագրում արտացոլված են ուսուցման երեք փուլերը.

առաջին փուլ – ներածական-կանոնավորող դասընթաց,

երկրորդ փուլ – կարդալու, մենախոսելու, զրուցելու ունակությունների և կարողությունների զարգացում և կատարելագործում (հիմնական դասընթաց) 70 ժամ

երրորդ փուլ - անգլերեն լեզվի ուսումնասիրությունից գործնական կիրառությանն անցման իրագործումը՝ մասնագիտական նպատակներով:

Ոչ լեզվական բուհերի գործող ուսումնական պլանի համաձայն օտար լեզվի դասընթացի ուսուցմանը հատկացվում է 110 ժամ՝ լսարանային պարտադիր պարապմունքներ V և VI կիսամյակներում: V կիսամյակը

ավարտվում է ստուգարքով, իսկ ամբողջ դասընթացի ուսուցումը՝ VI կիսամյակում ամփոփիչ քննությամբ:

Ներածական դասընթացի նպատակը հանդիսանում է դպրոցում ստացած գիտելիքների համակարգումը, անգլերենի հնչյունների և տառերի ճիշտ արտասանության դրվածքը, կարդալու հմտությունների զարգացումը և հետագա կատարելագործումը:

Երկրորդ փուլի նպատակը հանդիսանում է կարդալու կարողությունների ձևավորումն ու կատարելագործումը տարբեր նպատակային դրությամբ՝ տեքստի բովանդակության ընդհանուր ծանոթությունից մինչև կարդածի լրիվ հասկանալը, ինչպես նաև հարցերին պատասխանելը և համառոտ հաղորդումներ պատրաստելը, ասվածը հասկանալը և հարցեր տալը:

Երրորդ փուլը նախատեսում է տեքստերի ընդհանուր ծանոթությունից անցումը կարդացածի ամբողջական հասկանալուն, բանավոր խոսքի ունակությունների կատարելագործումը այն թեմաների հիման վրա, որոնք կապված են ուսանողի ուսումնասիրած մասնագիտության հետ:

Կարդալու ունակություններին տիրապետելու համար նախատեսվում է քերականական նյութ, որը ենթադրում է լեզվի յուրացումը և հիմնված է մայրենի լեզվի երևույթների համեմատության վրա: Կազմված են քերականական բացատրություններ ամեն դասի սկզբունքով, նյութը տրվում և ամրապնդվում է աստիճանաբար, հեշտից դժվար:

Ներածական դասընթաց

Դաս 1

Հնչյունաբանություն.

լեզվի հնչյունական և գրային ձևերը.

ա) հնչյուն-ձայնավոր, բաղաձայն-ձայնեղ, խուլ

բ) տառ

գ) “to be” տառադարձում

Ուղղագրություն. այբուբեն:

Դաս 2

Հնչյունաբանություն.

ձայնավոր տառերը կարդալու երկու եղանակը.

ա) բաց վանկ

բ) փակ վանկ

Տառակապակցություններ.

ա) “ee”, “ea”, “oo”, “ai”, “ay”

բ) sh, ch, tch, wh, all, ay

Շեշտ. բառային, արտահայտչական, տրամաբանական:

Ձայնի ելևէջ. բարձրացող, իջնող տոն

Քերականություն.

Հոդեր. անորոշ հոդի երկու ձևեր. a, an

Գոյականներ, որոնք ունեն ածականով արտահայտված որոշիչներ:

Դաս 3

Քերականություն.

Գոյական անուն. նյութական, հավաքական:

ա) Գոյականի հոգնակի թվի կազմությունը.

բ) հոդեր նյութական և հավաքական գոյականների եզակի և հոգնակի թվերի հետ:

Բաղադրյալ ստորոգյալ. բայ-հանգույց “to be”

ա) “to be” բայի հոգնակի թիվը

բ) “to be” բայով ժխտական նախադասություններ

գ) “to be” բայով հարցական նախադասություններ

Դաս 4

Քերականություն

ցուցական դերանուններ “this, that”

ա) դերանունների հոգնակի թիվը this, that-these, those

բ) this, that դերանունների դերը նախադասության մեջ:

Հարցական նախադասությունների տեսակները. ընդհանուր, հատուկ, այլընտրաքային:

Հրամայական եղանակ:

Տեղի նախդիրներ “in, on, under, at”

“Where” հարցական բառը

Դաս 5

Քերականություն

Անձնական դերանուններ.

ա) ուղղական հոլովով անձնական դերանունների դերը նախադասության մեջ

բ) անձնական դերանունների խնդրառական հոլովը

գ) խնդրառական հոլովով անձնական դերանունների դերը նախադասության մեջ

Ստացական դերանուններ

ա) նախադասության մեջ ստացական դերանունների դերը

բ) “whose” հարցական բառը

Բառապաշար. տեքստի ընթերցում

ա) թարգմանություն անգլերենից հայերեն

բ) թարգմանություն հայերենից անգլերեն

գ) պարզ պատմողական նախադասությունների կազմում

Դաս 6

Քերականություն

Թվական անուն.

ա) քանակական թվականների կազմում և կիրառում

բ) դասական թվականների կազմում և կիրառում

Հարցեր ենթակային. հարցական “who” բառը “of” նախդիրը ստացական հոլովի հարաբերություն արտահայտելու համար:

Գոյականների ստացական հոլովը (my brother’s house).

Բառապաշար. Տեքստ “Our family“

ա)տեքստի ընթերցում

բ) թարգմանություն անգլերենից հայերեն

գ) թարգմանություն հայերենից անգլերեն

դ) տեքստը պատմել

ե) երկխոսություն (հարց ու պատասխան)

Դաս 7

Քերականություն

“to have” բայը. հատատական, ժխտական և հարցական ձևերը

Much, many, little, few դերանունները և դրանց կիրառումը (հաշվելի և անհաշվելի գոյականներ)

Հատուկ հարց how much, how many

Many, much դերանունների համարժեքները

Little, few դերանունների գործածությունը “a” հոդի հետ

Բառապաշար. Տեքստ. “My friend”

ա)տեքստի ընթերցում

բ) թարգմանություն անգլերենից հայերեն

գ) թարգմանություն հայերենից անգլերեն

դ) երկխոսություն (հարց ու պատասխան)

ե) տեքստը պատմել

Դաս 8

Քերականություն

1) “there is, there are” դարձվածքները, (բառերի դասավորությունը հարցական և ժխտական ձևերում)
2) some, any, no դերանունները.

ա) some կիրառությունը հաստատական նախադասություններում

բ) any կիրառումը հաստատական նախադասություններում

դ) ժխտական no դերանունի և ժխտական not մասնիկի համեմատումը

3) Present Continuous Tense. ձևավորումն ու կիրառումը, գաղափար դերբայի մասին (Present Participle):

Բառապաշար. Տեքստ. “My flat”

ա)տեքստի ընթերցում

բ) թարգմանություն անգլերենից հայերեն

գ) թարգմանություն հայերենից անգլերեն

դ) երկխոսություն (հարց ու պատասխան)

ե) տեքստը պատմել

Դարձվածաբանություն. be at home**,** East or West home is best

Հիմնական դասընթաց

Հիմնական դասընթացի մեջ մտնում են ընդհանուր կենցաղային, երկրագիտական, մարզական և մասնագիտական թեմատիկայով տեքստեր, բանավոր խոսքի զարգացման նյութեր, քերականական վարժություններ:

Թեմա 1

Քերականություն

1) Ածական անուն

ա) մեկ կամ երկվանկանի ածականներ,

բ) բազմավանկ ածականներ,

գ) ածականի համեմատության աստիճանների ձևավորումը,

դ) the հոդի կիրառումը գերադրական աստիճանի հետ,

ե) համեմատական կառույցներ as.....as, not so.....as

2) Ածականներից մակբայների ձևավորումը ly ածանցի միջոցով:

Մակբայների համեմատության աստիճանները:

3) Անենթակա նախադասություններ

Բառապաշար. տեքստ **«The seasons and the weather»**

ա) տարվա եղանակները, ամիսները, շաբաթվա օրերը,

բ) on, in նախդիրների կիրառուբունը տարվա եղանակների, ամիսների, շաբաթվա օրերի հետ,

գ) ընթերցել տեքստը,

դ) թարգմանություն անգլերենից հայերեն

ե) թարգմանություն հայերենից անգլերեն

զ) երկխոսություն (հարց ու պատասխան)

է) պատմել տեքստը

Թեմա 2

Քերականություն

1) գաղափար սեռի մասին “Active Voice”
2) Present Indefinite Tense

ա) Present Indefinite Tense –ի ձևավորումը (s, es վերջավորությունները եզակի թվի III դեմքում),

բ) do, does օժանդակ բայերը,

գ) հարցական ձևի ձևավորումը,

դ) ժխտական ձևի ձևավորումը,

3) to have բայը to have dinner, to have a talk, to have a rest, to have shower, to have a shower, to have a headache և այլ դարձվածային կապակցություններում:

Բառակազմություն

1) er, or ածանցները բայերից մասնագիտություն նշող գոյականներ կազմելու համար (to teach-teacher, to act-actor)
2) Խոսքի էթիկետ – ողջույնի ձևերը:

Բառապաշար. տեքստ “My working day”

ա) ընթերցել տեքստը

բ) թարգմանություն անգլերենից հայերեն

գ) թարգմանություն հայերենից անգլերեն

դ) երկխոսություն (հարց ու պատասխան)

ե) պատմել տեքստը

Թեմա 3

Քերականություն

1) Past Indefinite Tense

ա) գաղափար բայի երեք ձևերի մասին,

բ) կանոնավոր բայեր

գ) անկանոն բայեր

դ) “to be” օժանդակ բայը Past Indefinite Tense-ում

ե) հարցական նախադասությունների ձևավորումը Past Indefinite Tens-ում

զ) ժխտական նախադասությունների ձևավորումը Past Indefinite Tense – ում

է) Past Indefinite – համեմատությունը “used to” – ի հետ

2. Past Continuous Tense.

ա) Past Continuous Tense – հարցական ձևը

բ) Past Continuous Tense – ժխտական ձևը

գ) Past Continuous Tense – կիրառությունը (to have, to see, to hear, to feel, to know, to like, to understand, to seem բայերը)

դ) հարցեր ենթակային Past Indefinite Tense – ում և Past Continuous Tense – ում:

Բառապաշար. տեքստ “About Myself”.

ա) ընթերցել տեքստը

բ) թարգմանություն անգլերենից հայերեն

գ) թարգմանություն հայերենից անգլերեն

դ) երկխոսություն (հարց ու պատասխան)

ե) պատմել տեքստը

Թեմա 4

Քերականություն

1. Can, May, Must եղանակավորող բայեր.

ա) եղանակավորող բայերի առանձնահատկությունները,

բ) եղանակավորող բայերի կապակցումը բայի անորոշ ձևի հետ,

գ) հարցական և ժխտական ձևերի ձևավորումը,

դ) եղանակավորող բայերի խոնարհում Present Indefinite Tense – ում,

2. Եղանակավորող բայերի անցյալ ժամանակը

ա) եղանակավորող բայերի մոտ որոշ քերականական ձևերի բացակայությունը,

բ) եղանակավորող բայերի համարժեքները Past Indefinite Tense – ում,

գ) հարցական և ժխտական ձևերի ձևավորումը,

դ) հաստատական և ժխտական կարճ պատասխաններ

3. ought to, should, need բայերը և դրանց կիրառությունը

4. եղանակավորող արտահայտությունների հոմանիշագիտությունը

I must do that – I have to do that.

I can do it – I am able to do it.

You must go – You should go

5. Նախդիրներ

ա) ժամանակի

(at 2 o’ clock from till five),

բ) տեղի, ուղղության և շարժման.

(from that boy, into the bag, out of the water, to the blackboard, off the table),

գ) դրանց տեղը նախադասության մեջ:

Բառապաշար. տեքստ “Our Institute”.

ա) ընթերցել տեքստը,

բ) թարգմանություն անգլերենից հայերեն,

գ) թարգմանություն հայերենից անգլերեն,

դ) երկխոսություն (հարց ու պատասխան),

ե) պատմել տեքստը:

Թեմա 5

Քերականություն

1. Future Indefinite Tense.

ա) Future Indefinite Tense-ի ձևավորումը,

բ) «shall, will» օժանդակ բայերը և դրանց տեղը հարցական և ժխտական նախադասություններում

գ) հաստատական և ժխտական կարճ պատասխանները,

դ) Future Indefinite Tense – ի կիրառությունը in a day, next week և այլ ժամանակի մակբայների հետ,

ե) ապառնի գործողության արտահայտությունը to be going to կապակցության օգնությամբ

2. Բարդ նախադասություն:

ա) ստորադասական նախադասությունը շաղկապներով

- ժամանակի (it, unless)
- պայմանի (after, before, till, untill, when)

բ) Present Indefinite Tense – ի կիրառությունը ժամանակի և պայմանի ստորադասական նախադասություններում, եթե գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը Future Undefinite Tense – ում է:

3. Future Continuous Tense

ա) Future Continuous Tense – ի ձևավորումը,

բ) Future Continuous Tense – ի կիրառությունը

4. Խոսքի էթիկետ

5.Խոսակցի մտադրությունները բացահայտելու համար արտահայտությունների ձևերը. Where are you going to spend your week-end? Who are going to leave with?

Բառապաշար. տեքստ “Our Country”.

ա) ընթերցել տեքստը,

բ) թարգմանություն անգլերենից հայերեն

գ) թարգմանություն հայերենից անգլերեն,

դ) երկխոսություն (հարց ու պատասխան),

ե) պատմել տեքստը:

Թեմա 6

Քերականություն

1. Future Indefinite Tense – ում եղանակավորող բայերի համարժեքները,

2. the որոշյալ հոդի կիրառությունը աշխարհագրական անուններում.

ա) աշխարհի չորս կողմերի անվանումներում.

the North, the South, the East, the West,

բ) օվկիանոսների, ծովերի, գետերի լեռնաշղթաների անվանումներում.

the Atlantic Ocean, the Black Sea, the Araks.

Ոճաբանություն:

Գաղափար հոմանիշների, հականիշների, դարձվածքների և բազմիմաստ բառերի մասին:

Դարձվածաբանություն. clean head, come into one’s head, from head to food, have a good head on one’s shoulders, lose one’s head, a big heart, break somebody heart.

Բառապաշար. տեքստ “Great Britain”.

ա) ընթերցել տեքստը,

բ) թարգմանություն անգլերենից հայերեն,

գ) թարգմանություն հայերենից անգլերեն,

դ) երկխոսություն (հարց ու պատասխան),

ե) պատմել տեքստը:

Թեմա 7

Քերականություն

1. Present Perfect Tense

ա) Past Participle – ի անցյալ ժամանակի դերբայը,

բ) «to have» օժանդակ բայը

գ) Present Perfect Tense – ում հարցական և ժխտական ձևերի ձևավորումը,

դ) Present Perfect Tense – ի կիրառությունը

ե) անորոշ ժամանակի մակբայների տեղն ու կիրառությունը (already, yet, just, never, ever…)

2. Past Participle – ի կիրառությունը

ա) we are discussing the article, written by you – որոշիչները

բ) Past Participle – ի հայերեն թարգմանության միջոցները

3. Դերանուն - գոյականները who (whom), what, which, whose և դրանց դերը նախադասության մեջ:

ա) ենթակայի Who is present today?

բ) բաղադրյալ ստորոգյալի անվանական մասը. Who is he? What is he?

գ) լրացում

- աննախդրավոր What did you do yesterday?
- նախդրավոր What are you looking at?

դ) բառերի շարադասություն հարցական նախադասություններում, որոնք վերաբերում են ենթակային:

Բառապաշար. տեքստ “The English language”

ա) ընթերցել տեքստը,

բ) թարգմանություն անգլերենից հայերեն,

գ) թարգմանություն հայերենից անգլերեն,

դ) երկխոսություն (հարց ու պատասխան),

ե) պատմել տեքստը

Թեմա 8

Քերականություն

1. Գաղափար սեռի մասին, կրավորական սեռ. Passive Voice

ա) Passive Voice – ի ձևավորումը. to be+Past Participle,

բ) Passive Voice – ի հարցական և ժխտական ձևերի ձևավորումը,

գ) “by” նախդիրի կիրառությունը գործողություն կատարողին որոշելու համար,

դ) Passive Voice – ի հայերեն թարգմանության միջոցները,

ե) անգլերենում և հայերենում կրավորական սեռի կիրառության նմանություններն ու տարբերությունները:

2. Տրոհական հարց (Disjunctive questions).

ա) տրոհական հարցերի կառուցվածքը,

բ) տրոհական հարցերի II մասի ձևավորումը,

գ) տրոհական հարցերի կիրառությունը,

դ) տրոհական հարցերի հնչերանգը.

- քաղաքավարի դիմում. խնդրանք,
- բացականչություն

Բառապաշար. տեքստ «Olympic Games»

ա) ընթերցել տեքստը,

բ) թարգմանություն անգլերենից հայերեն,

գ) թարգմանություն հայերենից անգլերեն,

դ) երկխոսություն (հարց ու պատասխան),

ե) վերապատմել տեքստը

Թեմա 9

Քերականություն

1.Past and Future Perfect Tenses-ի ձևավորումը

had + Past Participle

shall/will have + Past Participle

ա) Past Perfect Tense – ի հարցական և ժխտական ձևերի ձևավորումը,

բ) Future Perfect Tense –ի հարցական և ժխտական ձևերի ձևավորումը,

2. Past and Future Perfect Tenses-ի կիրառությունը.

ա) գործողության ավարտն արտահայտելու համար by նախդիրի կիրառությունը,

բ) գործողության ավարտն արտահայտելու այլ գործողության օգնությամբ,

գ) Present Perfect Tense –ի կիրառությունը Future Perfect Tense – ի փոխարեն ժամանակի և պայմանի ստորադասական նախադասություններում

Բառապաշար. տեքստ «Sport in Our Life»

ա) ընթերցել տեքստը,

բ) թարգմանություն անգլերենից հայերեն,

գ) թարգմանություն հայերենից անգլերեն,

դ) երկխոսություն (հարց ու պատասխան),

ե) պատմել տեքստը

Թեմա 10

Քերականություն.

Ժամանակների համաձայնեցումը (Sequence of Tenses)

1) ստորոգելիական ժամանակների համաձայնեցման միջոցները գլխավոր և ստորադասական նախադասություններում, եթե գլխավորում բայ – ստորոգյալը Past Indefinite Tense – ում է.

ա) անձնական և ստացական դերանունների փոխարինումը,

բ) դերանունների և մակբայների փոխարինումը՝ ըստ իմաստի here – there, this – that, now – then,

գ) հարցական նախադասությունների փոխակերպումը անուղղակի խոսքում,

դ) հրամայական եղանակի փոխանցումը անուղղակի խոսքում:

2) Ուղղակի խոսք
3) Անուղղակի խոսք

Բառապաշար. տեքստ «Sport in Our Life»

ա) ընթերցել տեքստը,

բ) թարգմանություն անգլերենից հայերեն,

գ) թարգմանություն հայերենից անգլերեն,

դ) երկխոսություն (հարց ու պատասխան),

ե) պատմել տեքստը:

Ակնկալվող ուսումնական արդյունքներ

Օտար լեզու (անգլերեն) առարկայի ուսուցման ընթացքում ուսանողները

<u>կիմանան՝</u>

- նախադասության կառուցվածքը (հաստատական, ժխտական, հարցական),
- բայի ժամանակային ձևերը,
- գոյական անուն (հոգնակի թվի կազմությունը, հոլովները),
- ածական անուն և մակբայ, դրանց համեմատության աստիճանները,
- դերանուն
- դարձվածքներ

Նախատեսված քերականական և բառական նյութերը ուսումնասիրվում են հատուկ մշակված տեքստերով

Առարկայի ուսուցման ավարտին ուսանողները

<u>կկարողանան՝</u>

- կարդալ և թարգմանել բառարանով
- ներկայացնել իրենց (ինքնակենսագրություն)
- ներկայացնել իրենց երկիրը
- կկարողանան հասկանալ մարզական տերմինաբանությունը
- հասկանալ և կիրառել տերմիններն ըստ համապատասխան սպորտաձևերի

Առարկայի ուսուցման ավարտին գնահատման չափանիշներ

Գիտելիքների գնահատումը իրականանում է հարյուր միավորանոց սանդղակով: Ընդհանուր գնահատականի համար հաշվի են առնվում հաճախումների (10), գիտելիքների (50), ակտիվության (15), ինքնուրույն աշխատանքի (գրավոր) (25) միավորները:

<u>Ուսուցման համար անհրաժեշտ նյութերն են՝</u>

- Անգլերենի ուսումնական ձեռնարկ՝ նախատաեսված ՖԿՀՊԻ – ի ուսանողների համար,
- ուսումնական տեքստեր՝ ինքնուրույն թարգմանություններ կատարելու համար